ՔԱՂՎԱԾՔ
<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
ուրբաթ, 24 հունիսի 2022թ., 14:10

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
13 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Վարդան Աթայան

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Օվսաննա Առաքելյան
Գուրգեն Ղուկասյան
Դավիթ Պետրոսյան
Արթուր Ապերյան

Հրավիրվածներ
ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ Մանանա Աղիկյան, Արփենիկ Սահակյան, Զարուհի Ղազարյան
<Ֆինարմ> ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիայի գործադիր տնօրեն Կարեն Զաքարյան
<Գրանթ Թորնթոն> ՓԲԸ գործադիր տնօրեն Արմեն Հովհաննիսյան
Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասով
Ռիսկերի կառավարման գծով տնօրեն Սերգեյ Քոչարյան
Համապատասխանության դեպարտամենտի տնօրեն Լևոն Գրիգորյան

Հարց 5. <Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում:

Գոհար Գրիգորյանը ներկայացրեց, որ Բանկի 2021թ. ֆինանսական գործունեության արդյունքներով, Բանկի Խորհրդի 20.05.2022թ. որոշմամբ առաջարկվում է սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների՝ ճանաչել 2021թ. առաջացած 4,336,042 հազար ՀՀ դրամ գումարի չափով վնասը:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, <u>որոշում կայացրեց՝</u> սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել, համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների՝ ճանաչել 2021թ. առաջացած 4,336,042 հազար ՀՀ դրամ գումարի չափով վնասը:

կողմ՝ 162,308,261 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 27 հունիսի 2022թ.